ՆՈՐԱՀԱՅՏ ՔԱՐԵ ԳԼՈՒԽ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ ՀՆԱՎԱՅՐԻՑ

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հին Հայաստանի քանդակագործության նմուշներից է մինչ այժմ չլուսաբանված տղամարդու տուֆե դիմաքանդակը՝ հայտնաբերված Կարմիր բլուր հնավայրից: Դիմաքանդակը գտնվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի երաժշտական ֆոնդերի ավագ գիտաշխատող Մ. Մուշեղյանի մասնավոր հավաքածուում: Քանդակը 1970-ականներին պատահականորեն հայտնաբերել է վերջինիս ազգականը՝ Կարմիր բլուր այցելության ժամանակ[1]:

Կարմիր բլուրից գտնված քարե արձանները նորություն չեն: Այս հնավայրի պեղումներից մեզ են հասել մի քարե գլուխ՝ «ականավոր ուրարտացու» տնից, ութ ոճավորված, անգլուխ կանացիակերպ կուռք մինչուրարտական բնակավայրից՝ հայտնաբերված in situ վիճակում[2] և մեկ ուղղանկյուն իրանով ու զանգվածեղ գլխով կանացիակերպ կուռք՝ միջնաբերդի մոտ գտնվող դամբարանից[3]: Կարմիր բլուրի այս քանդակը վերը նշվածներից էապես տարբերվում է դեմքի մանրամասնություններով, անհատականացմամբ և պատրաստման ավելի կատարյալ ձևով: Այս ամենը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ արձանը կարող է լինել ավելի ուշ ժամանակաշրջանի, քան Կարմիր բլուրի մյուս քանդակներն են, որոնք հիմնականում, պատկանում են Ք. ա. II հազ. վերջին և I հազ. սկզբին, ունեն տվյալ ժամանակաշրջանին բնորոշ պար-

---

[1] *Դիմաքանդակի մասին տեղեկություն հաղորդելու և հրատարակման իրավունք ընձեռելու համար շնորհակալություն ենք հայտնում Մ. Մուշեղյանին:*

[2] А. А р у т ю н я н. Идолы из раскопок Кармир-Блура.– ИФЖ, № 2, 1958, с. 114.

[3] С. Е с а я н. Ереван (археологический очерк). Ереван, 1969, таб. 55.

զունակություն և զուրկ են դեմքի մանրամասնություններից (բնորոշ է հարթ, տափակ դեմքը)[4]:

Ներկայացվող քանդակը (տես նկարում) (բարձ.՝ 17 սմ, լայն.՝ 13,5 սմ, հաստ.՝ 15 սմ) ամբողջական է՝ պատրաստված մերձերևանյան շիկավուն տուֆից: Քանդակի վրա պահպանվել են աղերի և կրաքարային նստվածքների հետքեր, այն ամբողջությամբ ծածկված է պատինայով: Սանրվածքն ունի մեջտեղից բացվածք, իսկ հետևում արված են ուղղահայաց ակոսներ, մազերն ավարտվում են ծոծրակային մասում, որտեղ առկա է կոտրվածք, ականջները ցույց տրված չեն, ծածկված են սանրվածքով, հոնքերը փոքր-ինչ առաջ են եկած՝ ստորակետի նման ընդգծված: Սկսվելով քունքամասից և հետզհետե հաստանալով՝ գրեթե իրար են միանում քթարմատի վերնամասում: Աչքերը խոշոր են՝ լայն բացված և ընդգծված կոպերով, բիբը ավելի լավ նշված է ձախ աչքում, քիթն ուղիղ է, դեպի ներքև հետզհետե լայնացող: Արտահայտիչ են լայն ռունգերը և ոչ շատ խորը փոսիկներով քթանցքերը: Քթի ծայրամասը կոտրված է, շրթունքները արտահայտված են, կզակի վրա արված է փոս, վիզը նշված չէ, իսկ գլուխն ավարտվում է ներքևում հարթ մասով՝ նախատեսված պատվանդանի կամ հենակի վրա դնելու համար:

Ըստ տիպաբանական և ոճաբանական առանձնահատկությունների՝ խնդրո առարկա քանդակը մեզ հասած հին հայաստանյան քանդակների համեմատությամբ ավելի մոտ է անտիկ շրջանի օրինակներին: Այս ժամանակաշրջանի քանդակների շարքում մեր արձանին նման է Դարբանդ (Գյումրիից ոչ հեռու) գյուղից հայտնաբերված կանացի արձանի գլուխը[5]: Քանդակը Բ. Առաքելյանը թվագրում է Ք. ա. II դ. վերջով և III դ. սկզբով ու համարում «տեղական ծագում… ակնհայտ էթնիկական դիմագիծ և արևելյան տեսք ունեցող»[6]:

Կարմիր բլուրի տղամարդու խնդրո առարկա դիմաքանդակը, հավանաբար, համաժամանակյա է Դարբանդի քանդակին և

---

[4] *Օգտակար խորհուրդների և նկատառումների համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Հ. Մարգարյանին:*

[5] *Բ. Առաքելյան. Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ 26–27, տախտ. XXXII:*

[6] *Նույն տեղում:*

պատկերել է բարձրաստիճան երևելի անձնավորության կամ աստվածության:

НОВОНАЙДЕННАЯ КАМЕННАЯ ГОЛОВА ИЗ РАСКОПОК КАРМИР БЛУРА

ЛЕВОН МКРТЧЯН

Резюме

Обнаруженная при раскопках Кармир блура голова идола, хранившаяся в частной коллекции М. Мушегяна, по своей сути является уникальным памятником. Каменные идолы очень характерны для памятника Кармир блур. Но данный идол отличается от дошедших до нас древнеармянских скульптур своей типологической и стилистической неповторимостью. Он представляет собой голову мужчины с четкими и резко очерченными чертами лица, присущими более позднему – античному периоду. Похожий идол был найден в селе Дарбанд (недалеко от г. Гюмри). Вероятнее всего, рассматриваемый идол относится к тому же периоду, что и идол из Дарбанда – конец II в. до н. э. – III в. до н. э. и отображает высокопоставленное лицо или божество.

NEWLY DISCOVERED STONE HEAD FROM KARMIR BLUR

LEVON MKRTCHYAN

Summary

The head of the idol which was discovered during the excavations in Karmir blur and was preserved in the collection of M. Musheghyan, is a unique monument by its nature. Stone idols are characteristic to the archeological site of Karmir blur, but this idol differs from the other pre-Armenian sculptures by its typological and stylistic unique features. It represents a head of a man with distinct and clear facial features, which are characteristic to a later antique period. A similar idol was found in Daraband village (not far from Gyumri city). Most probably this idol represents a senior personality or a God.